ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 503

20 մայիս 2025թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ավետիք Վարազդատի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 2638664 տրված 19 մայիսի 2009թ), 0.08 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, 5-րդ փակուղի, 4 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 504

21 մայիս 2025թ.

ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 896 որոշմամբ և հիմք ընդունելով «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության լիազոր ներկայացուցիչ Հակոբ Բերբերյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, ք. Ծաղկաձոր, Սարալանջի փողոց թիվ 3/4 հասցեում գտնվող, հողամասի կառուցապատման իրավունքով պատկանող 0,002 հա մակերեսով հողամասի վրա մինչև 20 քառ.մ մակերեսով ոչ հիմնական բջջային կապի կայանի տեղադրման թույլտվություն:

2. Սահմանել, որ ոչ հիմնական բջջային կապի կայանը անհրաժեշտ է տեղադրել հողամասի սահմաններում, այն պետք է լինի հանելու կամ տեղափոխելու համար ապամոնտաժվող տարրերից հավաքվող կամ տարածական կայունություն ունեցող ամբողջական միավոր՝ բացառելով շինարարական աշխատանքներում թաց պրոցեսը, կապված տեղանքի առանձնահատկության հետ, կարող են կատարվել տեղանքին կապելու, հողին ժամանակավորապես ամրացնելու աշխատանքներ, ոչ հիմնական բջջային կապի կայանը հանելու կամ տեղափոխելու դեպքում պետք է վերականգնվի հողի մակերևույթը, դրա բարեկարգման ծածկույթը: Այդ ոչ հիմնական բջջային կապի կայանի տեղադրման, տեղափոխման, հողի ծածկույթի վերականգնման հետ կապված բոլոր ծախսերը կրում է ոչ հիմնական բջջային կապի կայանի սեփականատերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 505

21 մայիս 2025թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 76 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 17-ի «Ծաղկաձոր համայնքի համայնքային կազմակերպությունների 2025 թվականի ծախսերի նախահաշիվները հաստատելու մասին» թիվ 76 որոշման հավելվածներ 4, 5, 7 շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածներ՝ 4, 5, 7 :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի
24 դեկտեմբերի 2007թ. Թիվ 900-Ն հրաման

1. Հիմնարկի անվանումը _ Ծաղկաձոր համայնք

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

3. Հիմնարկին սպասարկող ՏԳԲ-ի անվանումը _Հրազդան

4. Գանձապետական բյուջետային հաշվի համարը _900 122002224

9	1	1	51	207005

5. Գանձապետական արտաբյուջետային հաշվի համարը ______________

Ծրագրի անվանումը —Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	տային ծախսեր ի տնտ. դասակ արգմա	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2025թ.-ի պետական բյուջեից, ընդ որում												
		I եռ.			II եռ.			III եռ.			IVեռ.			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	9	9	12	13	14	15
Աշխատավարձ և այլ	4111	8900,0	8900,0	8900,0	17800,0	17800,0	17800,0	36000,0	36000,0	36000,0	36000,0	36000,0	36000,0	36000,0
Պարգևատրում	4112	450,0	450,0	450,0	450,0	450,0	1900,0	4900,0	4900,0	4900,0	4900,0	4900,0	4900,0	4900,0
Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211	35,0	35,0	35,0	35,0	35,0	35,0	35,0	35,0	35,0	35,0	35,0	35,0	35,0
-էներգետիկ ծառայություններ	4212	1500,0	1500,0	1500,0	1800,0	1800,0	1800,0	3100,0	3100,0	3100,0	3100,0	3100,0	3100,0	3100,0
-Կոմունալ ծառայություններ	4213	100,0	100,0	100,0	165,0	165,0	165,0	215,0	215,0	215,0	215,0	215,0	215,0	215,0
-Կապի ծառայություններ	4214	25,0	25,0	25,0	50,0	50,0	50,0	75,0	75,0	75,0	75,0	75,0	75,0	75,0
Աշխատակազմի զարգ. մասնագիտ.ծառայութ. ծախսեր	4233	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Ներկայացուցչական ծախսեր	4237	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Գործուղման ծախսեր	4221	56,0	56,0	56,0	56,0	56,0	56,0	56,0	56,0	56,0	56,0	56,0	56,0	56.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	190,0	190,0	190,0	190,0	190,0	190,0	190,0	190,0	190,0	190,0	190,0	190,0	190,0
Մասնագիտական ծառ.- ներ	4241	130,0	130,0	130,0	130,0	130,0	130,0	130,0	130,0	130,0	130,0	130,0	130,0	130,0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	4252	60,0	60,0	60,0	60,0	60,0	60,0	60,0	60,0	60,0	60,0	60,0	60,0	60,0
-Գրասենյակային նյութեր, հագուստ	4261	600,0	600,0	600,0	600,0	600,0	600,0	900,0	900,0	900,0	900,0	900,0	900,0	900,0
-Առողջապահական և լաբորատոր	4266	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0
-Կենցաղային և այլ նյութեր	4267	2000,0	2000,0	2000,0	4000,0	4000,0	4000,0	6500,0	6500,0	6500,0	6500,0	6500,0	6500,0	6500,0
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0
Պարտադիր վճարներ	4823	13,0	13,0	13,0	13,0	13,0	13,0	13,0	13,0	13,0	13,0	13,0	13,0	13,0
Ընդամենը		14429,0	14429,0	14429,0	25719,0	25719,0	27169,0	52544,0	52544,0	52544,0	52544,0	52544,0	52544,0	52544

Հիմնարկի Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի ստորագրությունը ______________

Գլխավոր հաշվապահի ստորագրությունը ______________

Կ.Տ. 16 մայիսի 2025թ.

Հավելված N1
«Բյուջետային հիմնարկների պահպանման
ծախսերի նախահաշվի ձևը»
Սրընսակելի ձև N1
հաստատվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի 23 հուլիսի 2007 թվականի
N 597-Ն հրամանով

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
նախահաշիվը՝ 52544,0**հազ.** (Հիսուներկու միլիոն հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ գումարով:
(ընդամենը գումարը թվերով և տառերով)

Նարեկ Հարությունյան
ՀՀ պետական կառավարման մարմնի ղեկավարի/ համայնքի ղեկավարի/
ստորագրություն և ԱՀԱ
« 16 «մայիսի » 2025 թ

Կ.Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ
«01»«հունվարի»2025թ-«31»«դեկտեմբերի»2025թ

1. Հիմնարկի անվանումը՝ **Ծաղկաձոր համայնքի նախադպրոցական ուս. հաստ.**
2. Փոստային հասցեն **ք.Ծաղկաձոր, խ. Կեչառեցու 85**
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. ՀՀ պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմնի անվանումը **Կոտայքի մարզպետարան**
5. Հիմնարկը սպասարկող տեղական գանձապետական բաժնի (ՏԳԲ) անվանում **Հրազդանի ՏԳԲ**
6. Հիմնարկի տեղական գանձապետական բաժնում (ՏԳԲ) հաշվառման համա **900122002224**
7. Ֆինանսավորման աղբյուրի կոդը (ՀՀ պետական բյուջե 1, համայնքի բյուջե 2) **2**

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգ. ծածկագիր **09 | 1 | 1**
9. Ծրագրի անվանումը՝
10. Ծրագրի կոդը **51**
11. ՀՀ պետական կառավարման (ՏԻ) մարմնի կոդն ըստ բյուջետային ծախսերի գերատեսչակ. դասակարգման **2**
12. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Նույն ժամանակահատվածի համար նախկինում հաստատված՝ գործող նախահաշվի գումարները	նախահաշվում կատարված	Սույն նախահաշվով հաստատվող գումարները	այդ թվում՝ ըստ եռամսյակների (եռամսյակի ամիսներով)գործառական I	II	III	IV
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7
1100000	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,	x	52544,0	0,0	52544,0	14429,0	27169,0	52544,0	52544,0
40913,0	1.ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝	x	39450,0	1450,0	40900,0	9350,0	19700,0	40900,0	40900,0
1110000	1,1 Աշխատանքի վարձատրություն	x							
1111000	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411100	36000,0	0,0	36000,0	8900,0	17800,0	36000,0	36000,0
1112000	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	411200	3450,0	1450,0	4900,0	450,0	1900,0	4900,0	4900,0
1120000	2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	x	13081,0	-1450,0	11631,0	5066,0	7456,0	11631,0	11631,0
1121000	*2.1 Շարունակական ծախսեր*		3425,0	0,0	3425,0	1660,0	2050,0	3425,0	3425,0

Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	
1121100	-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	421100	35,0	0,0	35,0	35,0	35,0	35,0	35,0
1121200	-Էներգետիկ ծառայություններ	421200	3100,0	0,0	3100,0	1500,0	1800,0	3100,0	3100,0
1121300	-Կոմունալ ծառայություններ	421300	215,0	0,0	215,0	100,0	165,0	215,0	215,0
1121400	-Կապի ծառայություններ	421400	75,0	0,0	75,0	25,0	50,0	75,0	75,0
1121500	-Ապահովագրական ծախսեր	421500	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1121600	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	421600	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1121700	-Գործուղման ծախսեր	422100	0,0	56,0	56,0	56,0	56,0	56,0	56,0
1123000	*2.3 Պայմանագրային ծառայությունների ծեռք բերում*	x	446,0	0,0	446,0	446,0	446,0	446,0	446,0
1123300	*Աշխատակազմի զարգացման մասնագիտական ծառայությունների ծախսեր*	423300	100,0	0,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
1123400	*Տեղեկատվական ծախսեր*	423400	56,0	-56,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1123600	*-Ներկայացուցչական ծախսեր*	423700	100,0	0,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
1123800	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	190,0	0,0	190,0	190,0	190,0	190,0	190,0
1124000	*2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ծեռք բերում*	x	130,0	0,0	130,0	130,0	130,0	130,0	130,0
1124100	-Մասնագիտական ծառայություններ	424100	130,0	0,0	130,0	130,0	130,0	130,0	130,0
1125000	*2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ*	x	60,0	0,0	60,0	60,0	60,0	60,0	60,0
1125200	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425200	60,0	0,0	60,0	60,0	60,0	60,0	60,0
1126000	*2.6 Նյութեր*	x	9020,0	-1450,0	7570,0	2770,0	4770,0	7570,0	7570,00
1126600	*-Առողջապահական և լաբորատոր նյութեր*	426600	20,0	0,0	20,0	20,0	20,0	20,0	20,0
1126100	-Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	900,0	0,0	900,0	600,0	600,0	900,0	900,0
1126700	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	7500,0	-1000,0	6500,0	2000,0	4000,0	6500,0	6500,0
1126800	-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	600,0	-450,0	150,0	150,0	150,0	150,0	150,0
1172000	7.2 ՀԱՐԿԵՐ,ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒԺԵՐ,ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ	X	13,0	0,0	13,0	13,0	13,0	13,0	13,0
1172300	Պարտադիր վճարներ	482300	13,0	0,0	13,0	13,0	13,0	13,0	13,0
1200000	Բ.ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	X	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1210000	1.ՖԻՍՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	X	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1215000	Վարչական սարքավորումներ	512200	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1216000	Այլ մեքենաներ և սարքավորումներ	512900	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1000000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	52544,0	0,0	52544,0	14429,0	27169,0	52544,0	52544,0

ՏՆՕՐԵՆ _____ Ա Ասատրյան

(ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ) _____ Գ.Միլիտոնյան

Կ.Տ. (ստորագրություն)

Հավելված 5

ՖԻՆԱՆՍԱԿ[illegible]ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱ[illegible]ԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախա rարի
24 դեկտեմբերի 2007թ. Թիվ 900-Ն հ rաման

1. Հիմնարկի անվանումը _ Ծաղկաձոր համայնք
2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

9	5	1	51	207005

3. Հիմնարկին սպասարկող ՏԳԲ-ի անվանումը _Հրազդան
4. Գանձապետական բյուջետային հաշվի համարը _900122002216
5. Գանձապետական արտաբյուջետային հաշվի համարը _____

Ծրագրի անվանումը —Ծաղկաձոր համայնքի արտադպրոցական ուս.կազմ.

Ջեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	տային ծախսերի տնտ. դասակարգման	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2025թ.-ի պետական բյուջեից, ընդ որում												
		I եռ.			II եռ.			III եռ.			IVեռ.			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	9	9	12	13	14	15
Աշխատավարձ և այլ վճարներ	4111	6000,0	6000,0	6000,0	12000,0	12000,0	12000,0	12000,0	24000,0	24000,0	24000,0	24000,0	24000,0	24000,0
Պարգևատրում	4112	500,0	500,0	500,0	1000,0	1000,0	1000,0	3400,0	3400,0	3400,0	3400,0	3400,0	3400,0	3400,0
Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0	30,0
-Էներգետիկ ծառայություններ	4212	700,0	700,0	700,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0	1500,0
-Կոմունալ ծառայություններ	4213	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
-Կապի ծառայություններ	4214	25,0	25,0	25,0	50,0	50,0	50,0	65,0	65,0	65,0	65,0	65,0	65,0	65,0
-Գործուղման ծախսեր	4221	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
Աշխատակազմի զարգ. մասնագիտ. ծառայութ.ծախսեր	4233	50,0	50,0	50,0	50,0	50,0	50,0	50,0	50,0	50,0	50,0	50,0	50,0	50,0
Վարչական ծառայություններ	4231	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	350,0	350,0	350,0	700,0	700,0	700,0	700,0	700,0	700,0	700,0	700,0	700,0	700,0
Մասնագիտական ծառ.- ներ	4241	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	4252	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
-Գրասենյակային նյութեր, հագուստ	4261	250,0	250,0	250,0	400,0	400,0	400,0	850,0	850,0	850,0	850,0	850,0	850,0	850,0
-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0
-Կենցաղային և այլ նյութեր	4267	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
Պարտադիր վճարներ	4823	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0
Ընդամենը		8745,0	8745,0	8745,0	16570,0	16570,0	16570,0	19435,0	31435,0	31435,0	31435,0	31435,0	31435,0	31435,00

Հիմնարկի պատասխանատու ստորաբաժանման
ղեկավարի ստորագրությունը _____
Գլխավոր հաշվապահի
ստորագրությունը _____

Կ.Տ.

16 Մայիս 2025թ.

Հավելված N1
«Բյուջետային հիմնարկների պահպանման
ծախսերի նախահաշվի ձևը»
Սրբոսակերտ համայնք
հաստատվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի 23 հուլիսի 2007 թվականի
N 597-Ն հրամանով

Կ.Տ.

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
նախահաշիվը 31435.0հազ. . (երեսունմեկ միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարով:
(ընդամենը գումարը թվերով և տառերով)

Նարեկ Հարությունյան
(ՀՀ պետական կառավարման մարմնի ղեկավար /համայնքի
ղեկավարի/ ստորագրությունը և Ա.Հ.Ա.)
16 «մայիս » 2025թ

ՆԱԽԱՀԱՇԻՎ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ
«01»«հունվարի»2025թ-«31»«դեկտեմբերի»2025թ

1. Հիմնարկի անվանումը՝ **Ծաղկաձոր համայնքի արտադպրոցական ուս.կազմ.**
2. Փոստային հասցեն **ք.Ծաղկաձոր, Խ. Կեչառեցու 85/1**
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. ՀՀ պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմնի անվանումը **Կոտայքի մարզպետարան**
5. Հիմնարկը սպասարկող տեղական գանձապետական բաժնի (ՏԳԲ) անվանում **Հրազդանի ՏԳԲ**
6. Հիմնարկի՝ տեղական գանձապետական բաժնում (ՏԳԲ) հաշվառման համա **900122002216**
7. Ֆինանսավորման աղբյուրի կոդը (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2) **2**

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգ. ծածկագիր **09 5 1**
9. Ծրագրի անվանումը՝
10. Ծրագրի կոդը **51**
11.ՀՀ պետական կառավարման (ՏԻ) մարմնի կոդն ըստ բյուջետային ծախսերի գերատեսչակ. դասակարգման **2**
12. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Նույն ժամանակահատվածի համար նախնհնում հաստատված՝ գործող նախահաշվի ցուցանիշները	նախահաշվում կատարված փոփոխություն-	Սույն նախահաշվով հաստատվող ցուցանիշները	այդ թվում՝ ըստ եռամսյակների (եռամսյակի ամիսների)աճողական I	II	III	IV
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7
1100000	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,	x	31435,0	0,0	31435,0	8745,00	16570,0	31435,0	31435,0
1110000	1.ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	x	0,0	0,0	27400,0	6500,0	13000,0	27400,0	27400,0
1110000	1,1 Աշխատանքի վարձատրություն	x	0,0	0,0	24000,0	6000,0	12000,0	24000,0	24000,0
1111000	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411100	24000,0	0,0	24000,0	6000,0	12000,0	24000,0	24000,0

Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7
1112000	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4[illegible]200	0,0	0,0	3400,0	500,0	1000,0	3400,0	3400,0
1120000	2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	x	0,0	0,0	4015,0	2225,0	3550,0	4015,0	4015,0
1121000	*2.1 Շարունակական ծախսեր*	*x*	0,0	0,0	1795,0	955,0	1780,0	1795,0	1795,0
1121100	-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	421100	30,0	0,0	30,0	30,0	30,0	30,0	30,0
1121200	-էներգետիկ ծառայություններ	421200	1500,0	0,0	1500,0	700,0	1500,0	1500,0	1500,0
1121300	-Կոմունալ ծառայություններ	421300	200,0	0,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
1121400	-Կապի ծառայություններ	421400	65,0	0,0	65,0	25,0	50,0	65,0	65,0
1121500	- Գործուղման ծախսեր	422100	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1121600	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	421600	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1121800	-Արտագերատեսչական ծախսեր	421700	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1123000	*2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում*	x	0,0	0,0	850,0	500,0	850,0	850,0	850,0
1123500	- *Վարչական ծառայություններ*	423100	150,0	-50,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
1123300	*Աշխատակազմի մասնագիտական զարգացման*	423300		50,0	50,0	50,0	50,0	50,0	50,0
1123800	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	700,0	0,0	700,0	350,0	700,0	700,0	700,0
1124000	*2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում*	x	0,0	0,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
1124100	-Մասնագիտական ծառայություններ	424100	200,0	0,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
1125000	*2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)*	x		0,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
1125200	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և	425200	200,0	0,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
1126000	*2.6 Նյութեր*	x	0,0	0,0	970,0	370,0	520,0	970,0	970,0
1126600	***Առողջապահական և լաբորատոր նյութեր***	426600	20,0	0,0	20,0	20,0	20,0	20,0	20,0
1126100	-Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	850,0	0,0	850,0	250,0	400,0	850,0	850,0
1126700	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	100,0	0,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
1126800	-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1172000	7.2 ՀԱՐԿԵՐ,ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ,ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ	X	20,0	0,0	20,0	20,0	20,0	20,0	20,0
1172300	Պարտադիր վճարներ	4823	20,0	0,0	20,0	20,0	20,0	20,0	20,0
1200000	**Բ.ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ**	X	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1215000	Վարչական սարքավորումներ	512200	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
1000000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝**	x	31435,0	0,0	31435,0	8745,0	16570,0	31435,0	31435,0

« 16» մայիս 2025թ.

Կ.Տ

ՏՆՕՐԵՆ _____ **Ա.Մուրադյան**
(ստորագրություն) (Ա.Հ.Ա.)

(ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ) _____ (ստորագրություն) **Ն. Խաչատրյան**

Հավելված 7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՈՒՅՑ

24 դեկտեմբերի 2007թ. Թիվ 900-Ն հրաման

1. Հիմնարկի անվանումը՝ Ծաղկաձոր համայնք''Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն''ՀՈԱԿ

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

9	1	1	51	207005

3. Հիմնարկին սպասարկող ՏԳԲ-ի անվանումը _Հրազդան

4. Գանձապետական բյուջետային հաշվի համարը _90012200222 4

5, Գանձապետական արտաբյուջետային հաշվի համարը _____

Ծրագրի անվանումը նախադպրոցական ուսումնական հաստատություն

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ.	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2025թ.-ի պետական բյուջեից ընդ որում												Ընդամենը
		Ի եռ.			II եռ.			III եռ.			IVեռ.			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Աշխատավարձ և այլ վճարներ	4111	1215,4	2430,8	3646,2	4861,6	6077,0	7292,4	8507,8	9723,2	10938,6	12154,0	13369,4	14584,8	14584,8
Պարգևատրումներ	4112	0,0	0,0	220,0	0,0	0,0	680,0	2115,4	2115,4	2115,4	2115,4	2115,4	2115,4	2115,4
էներգետիկ ծառայություններ	4212	200,0	380,0	560,0	650,0	705,0	708,0	711,0	714,0	744,0	774,0	864,0	1064,0	1064,0
կոմունալ ծառայություններ	4213	8,0	16,0	24,0	32,0	40,0	48,0	56,0	64,0	72,0	80,0	88,0	96,0	96,0
կապի ծառայություն	4214	5,0	10,0	15,0	20,0	25,0	30,0	35,0	40,0	45,0	50,0	55,0	60,0	60,0
գործուղման ծախսեր	4221	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Ներկայացուցչական ծախսեր	4237	0,0	0,0	50,0	50,0	50,0	50,0	50,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	4239	0,0	1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0
մասնագիտական ծառայություններ	4241	30,0	37,0	37,0	51,0	51,0	51,0	65,0	65,0	65,0	65,0	65,0	65,0	65,0
շենքերի կառույցների նորոգում	4251	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0	200,0
մեքենաների և սարքավորումների նորոգում	4252	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0	150,0
գրասենյակային նյութեր և հագուստ	4261	400,0	400,0	400,0	400,0	400,0	400,0	400,0	400,0	400,0	400,0	400,0	400,0	400,0
առողջապահական ր լաբարատոր նյութեր	4266	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0	70,0
կենցաղային և այլ նյութեր	4267	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0
հատուկ նպատակային նյութեր	4269	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
պարտադիր վճար	4823	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0	20,0
ընդամենը		4698,4	7313,8	8992,2	10104,6	11388,0	13299,4	15980,2	17261,6	18520,0	19778,4	21096,8	22525,2	22525,2

Ծաղկաձոր համայնք''Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն''ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ն.Ղազարյան

Հաշվապահ՝ Գ. Միլիտոնյան

Կ.Տ

16 մայիս 2025թ.

Հավելված N1
«Բյուջետային հիմնարկների պահպանման
ծա[illegible]ի նախահաշվի ձևը»
Օրինակելի ձև N1
հաստատվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի 23 հուլիսի 2007 թվականի
N 597-Ն հրամանով

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Նախահաշիվը 22525200 (քսաներկու միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարով:
(ընդամենը գումարը թվերով և տառերով)

Նարեկ Հարությունյան
ստորագրությունը և Ա.Հ.Ա.)

«16» «մայիս » 2025թ

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ

«01»«հունվարի»2025թ-«31»«դեկտեմբերի»2025թ

1.Հիմնարկի անվանումը՝**Ծաղկաձոր համայնք"Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն"ՀՈԱԿ**
2. Փոստային հասցեն __2315
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. ՀՀ պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմնի անվանումը **Ծաղկաձորի համայնքապետարան**
5. Հիմնարկը սպասարկող տեղական գանձապետական բաժնի (ՏԳԲ) անվանումը **Հրազդանի ՏԳԲ**
6. Հիմնարկի տեղական գանձապետական բաժնում (ՏԳԲ) հաշվառման համարը **900122002224**
7. Ֆինանսավորման աղբյուրի կոդը (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2) 2

Կ.Տ.

8. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգ.

ծածկագիր	09	1	1

9. Ծրագրի անվանումը՝

10. Ծրագրի կոդը 51

11.ՀՀ պետական կառավարման (ՏԻ) մարմնի կոդն ըստ բյուջետային ծախսերի գերատեսչակ. դասակարգման 2

12. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Նույն ժամանակահատվածի համար նախկինում		Սույն նախահաշվով հաստատվող ցուցանիշները	այդ թվում՝ ըստ եռամսյակների (եռամսյակի ամիսների)աճողական			
	անվանումները	NN	նախահաշվի ցուցանիշները	նախահաշվում կատարված փոփոխություն-ները (ավելացումը՝ /+/,		I	II	III	IV
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7
1100000	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,	x	22525,0		22525,2	8992,2	13299,4	18520,0	22525,2
1110000	ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝	x	15800,2		16700,2	3866,2	7972,4	13054,0	16700,2
1110000	1,1 Աշխատանքի վարձատրություն	x	15800,2		16700,2	3866,2	7972,4	13054,0	16700,2
1111000	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411100	14584,8		14584,8	3646,2	7292,4	10938,6	14584,8
1112000	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	411200	1215,4	900,0	2115,4	220,0	680,0	2115,4	2115,4
1120000	2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	x	6705,0		5805,0	5106,0	5307,0	5446,0	5805,0
1121000	*2.1 Շարունակական ծախսեր*		1220,0		1320,0	699,0	886,0	961,0	1320,0
1121100	-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211	0,0		0,0	0,0	0,0	0,0	0,0

1121200	-Էներգետիկ ծառայություններ	4212	1064,0		1064,0	560,0	708,0	744,0	1064,0
1121300	-Կոմունալ ծառայություններ	4[illegible]	96,0		96,0	24,0	48,0	72,0	96,0
1121400	-Կապի ծառայություններ	4214	60,0		60,0	15,[illegible]	30,0	45,0	60,0
1121500	-Գործուղման ծախսեր	4221	0,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
1123000	***2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում***	x	**1300,0**		**1400,0**	**1350,0**	**1350,0**	**1400,0**	**1400,0**
1123300	-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	0,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
1123300	Ներկայացուցչական ծախսեր	4237	100,0		100,0	50,0	50,0	100,0	100,0
1123800	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	**1200,0**		1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0
1124000	***2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում***	x	65,0		**65,0**	**37,0**	**51,0**	**65,0**	**65,0**
1124100	-Մասնագիտական ծառայություններ	4241	**65,0**		65,0	37,0	51,0	65,0	65,0
1125000	***2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)***	x	350,0		**350,0**	**350,0**	**350,0**	**350,0**	**350,0**
1125100	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	200,0		200,0	200,0	200,0	200,0	200,0
1125200	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	**150,0**		150,0	150,0	150,0	150,0	150,0
1126000	***2.6 Նյութեր***	x	3770,0		**2670,0**	**2670,0**	**2670,0**	**2670,0**	**2670,0**
1126100	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	400,0		400,0	400,0	400,0	400,0	400,0
1126200	-Գյուղատնտեսական ապրանքներ	4262							
1126300	-Վերապատրաստման և ուսուցման նյութեր	4263							
1126400	-Տրանսպորտային նյութեր	4264							
1126500	-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265							
1126600	-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	70,0		70,0	70,0	70,0	70,0	70,0
1126700	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	2800,0	-700,0	2100,0	2100,0	2100,0	2100,0	2100,0
1126800	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	500,0	-400,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
1170000	***7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ***	x							
1171000	*7.1 ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ-ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ*	x							
1172000	*7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ*	x	20,0		**20,0**	**20,0**	**20,0**	**20,0**	**20,0**
1172300	-Պարտադիր վճարներ	4823			20,0	20,0	20,0	20,0	20,0
1000000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝**	x	22525,0	0,0	22525,2	8992,2	13299,4	18520,0	22525,2

տնօրեն

Կ.Տ.

հաշվապահ

(ստորագրություն)

Ն. Ղազարյան
(Ա.Հ.Ա.)

(ստորագրություն)

Գ. Միլիտոնյան
(Ա.Հ.Ա.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 506

21 մայիս 2025թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ,ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Մուլտի Ռեստ Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, Օլիմպիական փողոց 8/ տրամադրել՝

1) 2025 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 900 քմ տարածքում,

2) 2025 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում 900 քմ տարածքում ոգելից խմիչքների և 110 քմ տարածքում ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 507

26 մայիս 2025թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արթուր Ռոբերտի Գրիգորյան և Լիլիթ Կոլյայի Հասրաթյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 07052024-07-0118) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Նոր թաղամասի 4-րդ փողոց, 20 հասցեում գտնվող 0.06 հա մակերեսով հողամասի և (սեփականության վկայական N 08052024-07-0022) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Ծաղկաձոր ք., Նոր թաղամասի 3-րդ փողոց, 25/1 հասցեում գտնվող 0.06 հա մակերեսով հողամասի միավորման հետևանքով առաջացած 0.12 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր, Նոր թաղամասի 3-րդ փողոց, 25/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 508

26 մայիս 2025թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N146-Ն որոշման հավելված 2-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արամայիս Վարազդատի Սահրադյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր N 07-010-0013-0036), 0.336 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,քաղաք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, 3-րդ փողոց, 3-րդ փակուղի, 2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 509

26 մայիս 2025թ.

«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ 1-ԻՆ ՉԱՓԱԲԱԺԻՆԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/5» ծածկագրով կազմակերպված ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսվել էր ձեռք բերելու անխափան սնուցման աղբյուրներ՝ հետևյալ տեխնիկական բնութագրով՝ Հզորություն (VA) – 1500VA / 900W Մուտքային հոսանք – 230V Լարում – 220-240 VAC Հաճախականություն – 50/60 HZ+3Hz Լիցքավորման ժամանակ – 3 ժամ Մարտկոցի տեսակ – 4 x 12V 7AH Ելքային միացման տեսակը – 4 x IEC-320-C13 , 2 x IEC Jumpers Unit քանակը – 2U Երաշխիք – 1 տարի: Մատակարարումը նախատեսված էր իրականացնել մատակարար կազմակերպության կողմից,Պատվիրատուի կողմից նշված հասցեով:

Հայտերի բացման վերջնաժամկետը լրանալուց հետո դադարել է գոյություն ունենալ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով ապրանքների գնման պահանջը, քանի որ ներկա պահին առաջնահերթ անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ավելի թույլ պարամետրերով անխափան սնուցման սարքեր, իսկ հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրով սարքերը նախատեսվում է ձեռք բերել ավելի ուշ՝համայնքապետարանի նոր կառուցվող վարչական շենքում օգտագործելու նպատակով:

Հիմք ընդունելով վերոգրյալը,ինչպես նաև «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/5» ծածկագրով ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագիրը,գնումների համակարգողի եզրակացությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/5» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ գնման պահանջի վերացման հիմքով:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանը:

3.Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել՝ այն ստանալու պահից հաշված երեսուն օր ացուցային օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 510

26 մայիս 2025թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 06-Ի ԹԻՎ 603 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 06-ի «Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 603 որոշման հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 12 :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 12
ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր
համայնքի ղեկավարի 2022 թվականի
հուլիսի 06-ի թիվ 603 որոշման
փոփոխությունները՝
համայնքի ղեկավարի 2025 թվականի
մայիսի 26-ի թիվ 510 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

ա. ՀՀ կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ՝ ծածկագիր՝ **3.1-1**

բ. Բաժնի առաջատար մասնագետին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

1.2. Ենթակա և հաշվետու է

Առաջատար մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին: Առաջատար մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

ա. Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի առաջատար մասնագետներից մեկը ՝ բաժնի պետի հայեցողությամբ:

բ. Օրենքով նախատեսված դեպքերում Բաժնի առաջատար մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

գ. Բաժնի առաջատար մասնագետը Բաժնի առաջատար մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց՝ բաժնի պետի հայեցողությամբ:

1.4. Աշխատավայրը

Առաջատար մասնագետի հիմնական գործունեության վայրն է Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմը:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

գ) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.

դ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար.

զ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

է) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

ը) բաժնի պետի հանձնարարությամբ սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.
թ) մասնակցում է կառուցապատողներին տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքների, շինարարության (քանդման), ավարտված շինարարության շահագործման թույլտվությունների նախագծերի պատրաստմանը.
ժ) բաժնի պետի հանձնարարությամբ միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.
ի) մասնակցում է շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ սահմանված կարգով վերահսկողության իրականացմանը.
լ) մասնակցում է համայնքի սեփականություն համարվող հողերի օտարման կամ օգտագործման տրամադրման և այլ քաղաքաշինական գործընթացների իրականացման ժամանակ պահանջվող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր, քաղաքաշինական բնույթի տեխնիկական եզրակացություններ, հատակագծեր, գծագրեր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր կազմելու աշխատանքներին.
խ) մասնակցում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության աշխատանքներին.
ծ) մասնակցում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառմանը և համայնքի հողային հաշվեկշռի կազմմանը.
կ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ :

3. Կազմակերպական շրջանակը

3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը.
Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) Բաժնի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

բ) կատարում է բաժնի պետի հանձնարարականները, համայնքապետարանի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը

գ) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Բաժնի առաջատար մասնագետը իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը.

3.3. Շփումները և ներկայացուցչությունը.
առաջատար մասնագետը՝
ա) Բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ.

բ) Բաժնից և աշխատակազմից դուրս շփվում է բաժնի պետի հանձնարարությամբ.

գ) Բաժնից և աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
ա. Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է խնդիրների լուծմանը և գնահատմանը,
բ. բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի.

4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

4.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Առաջատար մասնագետը ունի առնվազն միջնակարգ կրթություն՝

4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

ա. ունի ՀՀ Սահմանադրության, ՀՀ հողային օրենսգրքի, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Քաղաքաշինության մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

բ. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

գ. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն :

4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

աշխատանքային ստաժ և փորձ չի պահանջվում

5. Համայնքային ծառայության դասային աստիճանը

5.1 Բաժնի առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան :